Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 878 - Ա որոշման

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել կառուցելու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր բնակավայրի 120 հա հողերի ոռոգման համակարգը: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 222,000,000 դրամ, որից 11,100,000 դրամ՝ Համայնքային բյուջե, 166,505,304 դրամ՝ ՀՀ կառավարություն, 44,394,696 դրամ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամ: Ծրագիրը «Հայաստան» համահայկական հիմնադրամի մասով հարկերից ազատվելու դեպքում ծրագրի արժեքը կկազմի 214,600,884 դրամ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Տավուշի մարզի Բերքաբեր բնակավայր, բնագավառը՝ ջրամատակարարում
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 214,600,884 դրամ, որից «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ծրագրի աջակցության համար կտրամադրվի 36,995,580 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն Տավուշի մարզի Բերքաբեր բնակավայրի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թ. հոկտեմբերի 15-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է աջակցել կառուցելու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր բնակավայրի 120 հա հողերի ոռոգման

	անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	համակարգը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թ. հոկտեմբերի 15-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ը: Արժեքը կազմում է 36,995,580 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր բնակավայրի 120 հա հողերի ոռոգման համակարգի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 36,995,580 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

27.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ